ՀԱՄԻԴՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Համիդյան կոտորածները XIX դ. 90-ական թվականներին Ֆրանսիայում լայն արձագանք են գտել և տեղիք տվել բողոքի բուռն ալիքի: Այս հարցում դրսևորված արտակարգ հետաքրքրության ակունքներում խարսխվում են մի շարք էական գործոններ: Նախ՝ XIX դ. 80-90-ական թվականները բնութագրվում են ֆրանսիական գաղութային քաղաքականության աննախադեպ ծավալմամբ, որը թելադրվում էր Երրորդ Հանրապետության ղեկի մոտ գտնվող բուրժուազիայի ֆինանսական, տնտեսական, քաղաքական շահերով[1]: 1880-1899 թվականներին ֆրանսիական գաղութային կայսրության տարածքը՝ շնորհիվ Աֆրիկայում և Հեռավոր Արևելքում ձեռք բերված տիրույթների (Թունիս, Մադագասկար, Կոնգո, Գվինեա, Հնդկաչին և այլն) հասնում էր 3.7 միլիոն քառակուսի միլի՝ 56.4 միլիոն բնակչությամբ[2]: Ուստի, երկրում մեծ էր հետաքրքրությունն արևելյան քաղաքականության ելևէջների և իբրև դրա անմիջական հետևանք՝ արևելյան երկրներում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Բացի դրանից, հարկ է չանտեսել այն նշանակալից տեղաշարժերը, որոնք դարի վերջին քառորդում ձևափոխեցին ֆրանսիական պատմագրության դիմագիծը: Խոսքը վերաբերում է մասնավորապես պոզիտիվիստական ուղղության ազդեցությունը կրող Գ. Մոնոյի կողմից 1876 թ. հիմնադրված «Պատմական հանդեսի» շուրջ համախմբված պատմաբանների մի աստղաբույլի (Է. Լավիս, Շ. Սենյոբոս, Շ.-Վ. Լանգլուա) գիտական բեղմնավոր գործունեությանը, որոնք հանուն պատմական ճշմարտության բացահայտման, ի չարս բազմաղան խնդիրների, հետևողականորեն առաջադրում էին պատմական աղբյուրների մանրազնին քննության և այդ թվում վաստաթղթերի ժողովածուների հրատարակության անհրաժեշտությունը[3]:

Այս հանգամանքները մեծապես խթանեցին Համիդյան ջարդերին նվիրված բազմաբնույթ և մեծաքանակ գրականության լույս ընծայմանը Ֆրանսիայում, ուր 90-ական թվականներին հրատարակվեցին կոտորածնե-

---

1 А. З. Манфред. Внешняя политика Франции 1871—1891 годов. М., 1952, с. 243; П. П. Черкасов. Судьба империи. Очерк колониальной экспансии Франции в XVI-XX вв. М., 1983, с. 35.

2 В. И. Антюхина-Московченко. Третья республика во Франции. 1870—1918. М., 1986, с. 34.

3 Ch.-O. Carbonell. Histoire et historiens. Une mutation ideologique des historiens français 1865–1895. Toulouse, 1976, p. 413–417; G. Thuillier et J. Tulard. Les écoles historiques. Paris, 1990, p. 25–31; Л. В. Таран. Историческая мысль Франции и России. 70-е годы XIX – 40-е годы XX в. Киев, 1994, с. 25—31.

ին նվիրված փաստաթղթերի ժողովածուներ[4], *գրքեր, գրքույկներ, հոդվածներ, մտավորականներից ոմանք դրանք լուսաբանեցին արևելյան հարցի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում*[5], *ֆրանսիական խորհրդարանում, ամսագրերում, հասարակական տարբեր վայրերում մերկացուցիչ ելույթներով հանդես եկան քաղաքական ու կրոնական գործիչները (Ժ. Ժորես, Դ. Կոշեն, Ֆ. գը Պրեսանսե, հայր Ֆ. Շարմետտն և ուրիշներ)*[6]:

Խարազանումների ընդհանուր հորձանուտում, որը XIX դ. 90-ական թվականներին Ֆրանսիայում կյանքի կոչվեց հայերի ցեղասպանության կազմակերպիչներին գատապարտելու անհրաժեշտությամբ, ուրույն տեղ են զբաղեցնում հայերի ցեղասպանության մեկնաբանության հարցում տարբեր մոտեցումներ դրսևորած ֆրանսիացի մտավորականների կողմից կազմակերպված հրապարակային ելույթները, որոնք միմյանցից մեծապես զանազանվում են բնույթով, վերհանված հիմնահարցերի ընդգրկումով և դրանց տրված վերլուծություններով, ինչը պայմանավորված է ոչ միայն հեղինակների հայացքների տարբերությամբ, այլև նրանց կողմից օգտագործված տարատեսակ սկզբնաղբյուրներով:

Ֆրանսիայում համիդյան ջարդերին նվիրված առաջին հրապարակային ելույթը հնչել է Կարա գը Վոյի կողմից Փարիզի Մատենագիտական սրահում 1896 թ. մարտի 9-ին[7]: *Տեսադաշտից ամբողջությամբ դուրս թողնելով Բեռլինի վեհաժողովից հետո դիվանագիտության քառուղիները մխրճված Հայկական հարցի ծագման իրողությունը, անտեսելով այդ հարցի գոյության իսկ փաստը և հետևաբար դրա լուծման ուղղությամբ Աբդուլ Համիդ II-ի գործադրած եռանդագին ջանքերը, նա, հարկավ, 90-ական թվականներին Օսմանյան կայսրությունն ալեկոծած ողբերգական իրադարձությունների դրդապատճառներին չի տվել սպառիչ մեկնաբանություններ:*

Կարա դը Վոն ուշադրությունը կենտրոնացնում է մասնավորապես Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թշվառ վիճակի, կոտորածների նկարագրության և դրանց հարակից հարցերի վրա: Նրա կարծիքով անե-

---

4 Les massacres d'Armenie. Temoignages des victimes. Preface de G. Clemenceau. Paris, 1896; La vérité sur les massacres d'Arménie. Documents nouveaux ou peu connus. Par un Philarmene. Paris, 1986; P[ere] F. C h a r m e t a n t. Martyrologe armenien. Tableau officiel des massacres d'Arménie dressé apres enquetes par les six ambassades de Constantinople et statistique dressee par des temoins oculaires. Paris, 1896; Documents diplomatiques. Affaires armeniennes. Projets de reformes dans l'Empire ottoman 1893–1897. Paris, 1897; Documents diplomatiques. Affaires armeniennes. Supplement.1895-1896. Paris, 1897.

5 V. B é r a r d. La politique du sultan. Paris, 1897; M. C h o u b l i e r. La question d'Orient depuis le traite de Berlin. Etude d'histoire dipolmatique. Paris, 1897; E. D r i a u l t. La question d'Orient depuis ses origines jusqu'a nos jours. Paris, 1898.

6 F. d e P r e s s e n c é. La question armenienne – "Revue des deux mondes" (Paris), 3e livraison, 1er décembre 1895, t. 132; P e r e F. C h a r m e t a n t. L'Armenie agonissante et l'Europe chretienne. Appel aux chefs d'Etat. Paris, s. d; Ն ա յ ն ի՝ Le Livre jaune et la question d'Orient – "Revue diplomatique et coloniale" (Paris), 1897, N 1; D. C o c h i n. Contre les barbares. Paris, 1899; Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. 1. Les alliances europeennes (1887-1903). Textes ressembles, présentes et annotes par Max Bonnafous. Paris, 1931.

7 Les massacres d'Armenie. Conference faite au salon Bibliographique le 9 mars 1896. Par M. le baron Carra de Vaux. Paris, 1896.

լանելի կացությունը հայերին դրդել է ընդվզելու, որն արտահայտվել է մասնավորապես Օսմանյան կայսրության սահմաններից դուրս լրագրեր հրատարակելու և հանրահավաքներ կազմակերպելու միջոցով: Ընդ որում, այդ ասպարեզում հայերի ծավալած գործունեության դեմ ուղղված օսմանյան կառավարության վարքագիծը ենթարկվում է նրա խիստ քննադատությանը. «Ավելի մեծ ազատություններ ստանալու դիտավորությամբ նրանց (հայերի – Վ. Պ.) կողմից ձեռնարկված փոքրագույն իսկ շարժումը թուրքերի կողմից կարող է դիտվել իբրև ապստամբական գործողություն»[8]: 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում կազմակերպված բողոքի ցույցին հաջորդած բռնություններ առթիվ Կարա դը Վոն եզրակացնում է. «Ասիայում այս պահին մահմեդական ոգին ամբողջությամբ պատրաստ էր մեծ հանցագործություններ իրագործելու, և հեռվում, անհայտ հովտում, բոցկլտաց այն կայծը, որից սլետք է սարսափելի հրդեհ ոռնկվեր»[9]:

Թուրքերի հետ մեկտեղ քրդերին և լազերին համարելով հայերի ողբերգության «դլխավոր հեղինակները», Կարա դը Վոն իբրև կոտորածների միակ հնարավոր դրդապատճառ է դիտում մահմեդականների և քրիստոնյաների միջև վաղուց ի վեր գոյություն ունեցող կրոնական առճակատումը: Ըստ նրա մահմեդական մոլեռանդությունը սանձազերծվել է 1894 թ. Սասունում «նողկալի դաժանությամբ իրականացված գործողություններից» ի վեր: «Հայերի դժգոհությունը, նրանց հուզումները, կոչերը տերություններին նրանց նույնացրել են ապստամբների հետ: Անհավատների դեմ Մուհամեդի կողմից նախկինում արտաբերված մոլեգին անեծքները կիրառելի էին նրանց նկատմամբ»[10]:

Կարա դը Վոն ներկայացնում է Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած արյունալի անցքերը, դրանք բնութագրում իբրև «սարսափելի սպանդ», «ահարկու տեսարաններ», որոնք Տրապիզոնի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Մուշի և այլ նահանգներում ի հայտ են եկել «հաջորդաբար կամ միաժամանակ ու անողոք համանմանությամբ»[11]: Նրա ելույթն, ի դեպ, զանազանվում է մյուս բոլորից այլոց կողմից շրջանցված խնդիրների շոշափմամբ: Նա, օրինակ, այն եզակի մտավորականներից է, որը հանդամանալից քննարկել է դյուղական վայրերում տեղի ունեցած վայրագությունները: «Թվում է, թե իրագործված դաժանությունները,– գրում է նա,– շատ ավելի բարբարոսական բնույթ են կրում գյուղերում, քան քաղաքներում»: Հենց գյուղերում է, որ, նրա կարծիքով, «ոչնչացնելու կամ կրոնափոխության միջոցով անհավատներին բնաջնջելու մահմեդականների անշարժ դաղափարը, որն ամբողջությամբ անիրագործելի է քաղաքներում, իր ինքնահասատումն է գտել ամենացավալի ձևով»[12]:

Ցեղասպանության մեկնաբանության հարցում որդեգրած մոտեցումը Կարա դը Վոյին անկասկած մղել է առանձնահատուկ ուշադրություն

---

8 Նույն տեղում, էջ 7:

9 Նույն տեղում, էջ 8:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 10, 11–12:

12 Նույն տեղում, էջ 10, 11:

դարձնելու գյուղերում վանքերի ու եկեղեցիների կողոպտման, ավերման, սպծման, ինչպես նաև ամենամոլեգին ձևով կրքերի բորբոքման պատճառ դարձած քահանաներին ամենադաժան խոշտանգումների ենթարկելու վաստերին: «Մահմեդական հորդաների մոլեգնությունը կրոնական տարրի հանդեպ,– հավաստում է նա,– ամենուր դրսևորվում է ծայրահեղորեն: Ոչ միայն քահանաներն են դատապարտված վատթարագույն կտտանքների, այլև նրանց դիակներն են հոշոտվում»[13]: Կոտորածները նա համեմատում է «սարսափելի փոթորկի» հետ, որի ամեհի ալիքները կործանել են ամեն ինչ՝ հաշվի չառնելով «ո՛չ տրված խոստումը, ո՛չ սահմանված իրավունքը, ո՛չ ընտանիքը, ո՛չ հավատը, ո՛չ մանկությունը, ո՛չ մայրությունը, ո՛չ ի չարս այլ բաների հարգանքի արժանի հոգևորականությունն ու կուսությունը»[14]:

Հեղինակը զանազան տեսանկյուններից վերլուծում է կոտորածների ընթացքում հայերի դրսևորած վարքագիծը, որն, ըստ էության, այլ անձանց ելույթներում իր արտացոլումը չի գտել: «Ասել են, թե հայերը սխալներ են թույլատրել: Եթե մենք պետք է մտածենք,– գրում է նա,– որ հին և քրիստոնյա աղգությունը, որին մահմեդական նվաճումը լծի ներքո է դրել, սխալվում է երբ հարաբերական անկախություն է որոնում, ես ընդունում եմ, որ հայերը սխալներ են թույլատրել»[15]: Բացառելով հայերի կողմից սադրիչ գործողությունների հնարավորությունը, Կարա դը Վոն ջանում է բացահայտել նրանց գրված պասսիվ դիրքորոշման պատճառները. «Նախ կարելի է ենթադրել, որ եթե հայերն ընդհանուր առմամբ չեն մարտնչել, ապա այդ արվել է այն պատճառով, որ յուրաքանչյուր բնույթի պայքարն անհնար էր: Ինչ վերաբերում է մոտալուտ կոտորածներին ի տես նրանց անգործությանը, ապա դրա համար ի զորու էին ճանապարհ հարթելու մի շարք պատճառներ կառավարության հավաստիացումները, տերությունների գործողությունները, հյուպատոսների քայլերը»[16]: Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեզ հետաքրքրող հեղինակներից Կարա դը Վոն միակն է, որ թռուցիկ հայացք է ձգել հայերի ինքնապաշտպանության, գուցե և եզակի, փաստերի վրա: «Հայերը,– գրում է նա,– մեծ հերոսությամբ պաշտպանվել են այնտեղ, որտեղ կարողացել են»: Խոսքը կոնկրետացնելով մասնավորապես Զեյթունի ինքնապաշտպանության վրա, հեղինակն այն համարում է «արդյունավետ», իսկ կայացած հաշտության պայմանները՝ «պատվավոր»[17]: Հարկ է նաև ընդգծել, որ թեև հարևանցիորեն, Կարա դը Վոն, այնուամենայնիվ, քննադատական խոսքեր է ուղղել թե՛ Ֆրանսիայի, որն անսալով հայերի կոչին որևէ նախաձեռնությամբ հանդես չի եկել, թե՛ հակասություններից բզկտվող եվրոպական բազմաթիվ աղգությունների հասցեին[18]:

---

13 Նույն տեղում, էջ 12:
14 Նույն տեղում, էջ 13:
15 Նույն տեղում:
16 Նույն տեղում, էջ 14:
17 Նույն տեղում, էջ 15:
18 Նույն տեղում, էջ 8, 17:

Հայտարարում հայերի եղեռնը բացառապես կրոնական գործոնով պայմանավորող հեղինակը եզրահանգում է. «Մեր կարծիքով Հայաստանի կոտորածների պատասխանատուն իսլամն է: Դրանք իրականացվել են Ղուրանի խրատներին, իսլամականության ոգուն և ավանդներին համաձայն և հանուն այս կրոնի հավատացյալների համար ի սկզբանե նախանշված անհավատներին ոչնչացնելու նպատակի»[19]: Անկախ այդ հանգամանքից, նա հպանցիկ ձևով մատնանշում է նաև ջարդերի հարցում թուրքական իշխանությունների պատասխանատվության հանգամանքը. «Թուրքական իշխանությունների մեղսակցությունը կոտորածներին անժխտելի է: Անհնար է հանցագործությունների այս լայնածավալ համակարգը ներկայացնել իբրև քուրդ և լազ հորդաների կողմից տարբերայնորեն սանձազերծված բարբարոսության հետևանք»[20]: Բայց քանզի նա «Թուրքական իշխանությունների մեղսակցությունը» որևէ փաստով չի հիմնավորում, այս եզրակացությունը վերածվում է մերկապարանոց հայտարարության: Այդուհանդերձ, նրա ելույթն աչքի է զարնում քննարկված խնդիրների բազմազանությամբ, որը և նախորոշում է նրա տեղը հրապարակային այլ դասախոսությունների թվում:

Կարա դը Վոյի հայերի ցեղասպանությունն իբրև սոսկ կրոնական շղարշով պարուրված իրադարձություն մեկնաբանող ելակետային դրույթը լիովին համահունչ է Բարոյական գիտությունների ակադեմիայի անդամ (1887 թ.) Անատոլ Լերուա-Բոլիոյի (1842-1912 թթ.) դիրքորոշման հետ, որի համիդյան կոտորածներին նվիրված հրապարակային դասախոսությունը տեղի է ունեցել 1896 թ. հունիսի 9-ին, Գիտական ընկերությունների սրահում[21]: Ռուսաստանի և Եվրոպայի պատմությանը նվիրված մի շարք ուսումնասիրությունների հեղինակը[22] ևս հայկական կոտորածների պատմությանն առնչվող հարցերը քննարկել է լայն շառավիղով:

Հայաստան այցելած Լերուա-Բոլիոն հայերին անվանում է «դժբախտ» և «ճնշված» ժողովուրդ, իսկ Հայկական հարցը՝ «ցավալի» ու «տանջահար»: Նա դառնությամբ է նշում, որ Հայաստանը վերածվել է սոսկ աշխարհագրական հասկացության, իսկ թուրքերը հավակնում են «քարտեղի վրայից ջնջել ոչ միայն Հայաստանի անունը, այլև վերացնել բուն հայ ժողովրդին»[23]: Հայերի համար ստեղծված ծանր կացությունը նա մասամբ պայմանավորում է հայկական նահանգները մայրաքաղաքից անջրպետող տարածությամբ. այնտեղ «Թուրքական վարչության արատներն իրենց զգալ են տալիս ամենադժնի ձևով: Այնտեղ իսլամի հին ոգին ղերիշխում է միահեծանորեն, այնտեղ չկա որևէ վերահսկողություն, քրիստոնյաների համար չկա արդարություն, այնտեղ ամենազոր են ոչ միայն փաշայի կամ կայմակամի կամքը, այլև հաճախ՝ վերջին թուրքի կամայական քմահա-

19 Նույն տեղում, էջ 15:

20 Նույն տեղում:

21 Les Armeniens et la question armenienne. Conférence faite par M. Anatole Leroy-Beaulieu, membre de l'Institut à l'Hotel des Sociétés savantes le 9 juin 1896. Paris, 1896.

22 A. Leroy-Beaulieu. L'empire des czars et les Russes. Paris, 1882; Նույնի՝ La France, la Russie et l'Europe. Paris, 1888; Նույնի՝ Christianisme et socialisme. Paris, 1905.

23 Les Armeniens et la question arménienne, p. 6

ճույքները»[24]: Թուրքիան համարելով անսահմանափակ միապետություն, նա Աբդուլ Համիդին բնութագրում է իբրև «ժամանակակից մարդուն» բնորոշ որևէ հատկանիշից զուրկ անձնավորության, որը «հին թուրքերի սկզբունքների և նախապաշարմունքների յուրօրինակ դերին էր» և բացարձակապես հակված չէր հավասարություն հաստատելու «ռայայի» և մահմեդական հավատացյալների միջև[25]:

Համաձայն Լերուա-Բոլիոյի բացատրությունների, վհատված հայերը, որոնց բողոքները նույնիսկ Բեռլինի վեհաժողովին հետո թե՛ եվրոպական դիվանագիտական, թե՛ օսմանյան լեկավար շրջաններում մնացել են անարձագանք (վերջիններս «նրանց պատասխանել են սալառնալիքներով կամ բանտարկությամբ»), հարկադրված են եղել դիմելու ինքնապաշտպանական միջոցների: «Հարկ է արդյո՞ք նրանց մեղադրել իրենց իսկ օգնելու ցանկություն դրսևորելու համար»[26],– տարակուսած դիմում է նա իր ունկնդիրներին: Քանի որ հայերը հիմնադրել են կոմիտեներ, լրագրեր և վորձել «իրենց հայրենակիցների շրջանում արթնացնել ազգային ոգին» նրանց անվանել են անարխիստներ, նիհիլիստներ և հեղափոխականներ: Իրականում, ինչպես նշում է նա, «այնժամ, երբ նրանք դառնում են այնքան անվեհեր, որ չեն հանդուրժում կեղեքումը, այնժամ, երբ համարձակվում են ինքնապաշտպանական ջանքեր գործադրել՝ նրանց անվանում են հեղափոխականներ, որոնց դեմ թույլատրելի է յուրաքանչյուր միջոցի կիրառումը»[27]:

Ցնցված կոտորածներից՝ Լերուա-Բոլիոն հայտարարում է. «Պատմությունը երբևէ չի արձանագրել, ես կասեմ ավելին, արևն ինքը... մեր տխուր՝ այդչափ հանցագործությունների հետևանքով արյունաներկ եղած երկրագնդի վրա հավանաբար երբևէ չի տեսել այնպիսի սարսափազդու ներկայացում, քան այն, որը շաբաթներ և ամիսներ շարունակ ընթացել է Արևելյան Անատոլիայի հարթավայրերում»[28]: Խուսափելով, ըստ էության, կոտորածների մանրամասների նկարագրության մեջ թափանցելուց, նա ճգնում է բացահայտել դրանց պատասխանատուներին: Որքան տարօրինակ է, բայց թուրքական կառավարությանը և Աբդուլ Համիդին խիստ բնորոշ և անկողմնակալ դնահատականներ տված պատմաբանը թե՛ մեկին, թե՛ մյուսին ամբողջությամբ զերծ է պահում հայկական ջարդերի պատասխանատվությունից: «Ո՞վ է այս կոտորածների պատասխանատուն» հարցին, հետևում է մշուշապատ և ծավալուն հետևյալ պատասխանը. «Ես չեմ համարձակվի ասել, որ դա կարող է լինել թուրքական կառավարությունը, ես հատկապես չեն համարձակվի ասել, ինչպես ոմանք, որ դա կարող է լինել սուլթանը: Ո՛չ, պարոնայք, ես չեմ ցանկանում հավատալ, որ սուլթանը կարող էր նման հրաման արձակել: Ես չեմ կարող ընդունել, որ Դուռը կամ Պալեն կարող էին կառավարիչներին՝ համանման ձևով հայ ազգության բնաջնջումը նախանշող ցուցում տալ: Բայց այն, ինչն ինձ հայտնի է,

24 Նույն տեղում, էջ 15-16:
25 Նույն տեղում, էջ 21, 23:
26 Նույն տեղում, էջ 28:
27 Նույն տեղում, էջ 29:
28 Նույն տեղում, էջ 30:

պարոնայք, այն, ինչը բխում է ականատեսների բոլոր պատմածներից, հանդում է նրան, որ այս ամենը կատարվել է կանխամտածված ձևով իշխանությունների ազդանշանի հիման վրա: Այն է եթե Անատոլիայի խորքերում Ատամրուլից կամ Ելդըզ-Քյոշքից տրված հրաման չեն ունեցել, ապա դիտակցել են, որ կոտորելով կարող են հաճոյանալ»: Մեկ այլ առթով միևնույն հարցին տրված նրա մեկնաբանությունը նույնքան աղոտ է. «Բավական է պնդել, որ նրանք, ովքեր տվել են կոտորածների ազդանշանը, կարծել են, թե կարող են հաճոյանալ Պալեին»[29]:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոյի դիրքորոշումը ցեղասպանության պատասխանատուների դիմաղերծման հարցում մեղմ ասած միանշանակ չէ: Խիստ դժվար է, անշուշտ, եթե չասենք անհնար կռահելն իսկ, թե սուլթանին և թուրքական կառավարությանը կոտորածներին անմեղսակից համարող պատմաբանն ի՞նչ նկատի ունի «իշխանություններ» անորոշ հասկացության ներքո: Շատ ավելի իրթին է կողմնորոշվելն իսկ այն հարցում, թե ո՞վքեր են կոտորածների ազդանշան տված խորհրդավոր անձիք, որոնց ինքնության բացահայտումը Լերուա-Բոլիոն խնամքով շրջանցում է:

Շարունակելով իր մտորումները, նա համառոտակի հիշատակում է XIX դ. ընթացքում Քիոսում, Լիբանանում, Բուլղարիայում, Եգիպտոսում տեղի ունեցած տարբեր այդ թվում մահմեդականների կոտորածների մասին և հանգում որքան անտրամաբանական, նույնքան և անմեկնաբանելի հետևության. «Այդպիսիք են արևելյան քաղաքականության գործելամիջոցները: Իսկ դրանից հետո, պարոնայք, արդյո՞ք հայերի կոտորածը ձեզ զարմանք է սլատճառում»: Հայտարարում հայկական ջարդերի հարցում նա դերադասում է մեղավոր ճանաչել «արևելյան քաղաքականությանը և մահմեդական մոլեռանդությանը», ձեռնպահ մնալով թե՛ «արևելյան քաղաքականություն» հեղհեղուկ հասկացության մեկնաբանումից, թե՛ այն կերտողների անունները թվարկելուց[30]:

Ինչ վերաբերում է «մահմեդական մոլեռանդությանը», ապա այդ առթիվ արդեն Լերուա-Բոլիոն չի զլանում անհրաժեշտ պարզաբանումներ տալ, քանզի նրա որդեդրած հայեցակետը բխում է հայերի եղեռնի հարցում կիրառվող հեռահար նպատակներ հետապնդող օսմանյան պետական քաղաքականության բուն փաստի ժխտումից և ուղղակիորեն հանդում հայկական կոտորածները զուտ կրոնական պիտակով սքողելու դաղափարին. «Եթե իսկական մեղավորը մոլեռանդությունը չէ, ապա քրիստոնյայի նկատմամբ տածվող ատելությունն ու նախանձն է, քանզի կրոնական ատելություններն այստեղ ձուլվում են ազգությունների ատելությանը»: Հանդամանորեն անդրադառնալով տիրող իրավիճակի բարդացման հարցին, նա իրավամբ մատնանշում է մահմեդական զինվորների և սպաների մեծամասնության մասնակցությունը կոտորածներին, որոնց օգնությանը դիմել էին կարդ ու կանոն հաստատելու դիտավորությամբ: Քրիստոնյա-

29 Նույն տեղում, էջ 31, 33:
30 Նույն տեղում, էջ 33:

ների նկատմամբ տածվող ատելությունը, սակայն, նրանց վերածել է սպանդի կատարածուների[31]:

Ելնելով ցեղասպանությունն իբրև միմիայն կրոնական երևույթ ներկայացնելու տեսակետը բազմակողմանիորեն հիմնավորելու անհրաժեշտությունից, Լերուա-Բոլիոն վկայակոչում է բազմազան, հիրավի, հավաստի փաստեր: «Հայերը,– գրում է նա,– միակ զոհերը չէ, որ եղել են: Հանգուցյալների թվում եղել են հարյուրավոր, եթե ոչ հազարավոր տարբեր արարողակարգ ունեցող այլ քրիստոնյաներ»: «Բարդ և ցավոտ» Հայկական հարցի «ամենատխուր» կողմերից մեկը նա համարում է բռնի կրոնափոխությունը, որի իբրև իր դիրքորոշման հիմնավորման հերթական կռվանի վրա հենվում է հաճույքով. «Բազմաթիվ վայրերում զոհերին մահվան և ուրացողության միջև ընտրության հնարավորություն է ընձեռվել»[32]:

Հասկանալի է, որ իրադարձությունների ընթացքին այսչափ իրազեկ պատմաբանը հազիվ թե միևնույն ժամանակ անտեղյակ լիներ Օսմանյան կայսրությունում պետական մակարդակով իրականացվող հայերի կոտորածների հանգամանքին և դրանց բուն դրդապատճառներին: Այդուհանդերձ, դժվարանում ենք ասել, թե ի՞նչ գործոններ են նրան մղել շրջանցելու ջարդերի կազմակերպիչների անունները և անտեսելու հայերի ցեղասպանության կազմակերպման և իրականացման հարցում Բարձր Դռան դիտավորություններն ու գործադրած ջանքերը: Ի վերջո, նա գերադասում է սոսկ «մարդկային խղճի» անունից պահանջել, որ «այդ դժբախտներին կրոնական ազատություն տրվի»[33]:

Այսպես, հայերի ցեղասպանությունը պատմաբանն ամբողջությամբ պայմանավորում է մահմեդականների և քրիստոնյաների միջև վաղուց ի վեր առկա թշնամությամբ, որն անհրաժեշտության պարագայում չի հապաղում հրավառվել: «Այլ միջոցների բացակայության հետևանքով իսլամի գերիշխանությունը հաստատվում է սրի միջոցով»,– եզրակացնում է նա: Դրա հետևանքով «ոչ հեռավոր անցյալում ծաղկում ապրող այս երկրամասն այսօր վերածվել է ամայի անապատի, լի ավերված գյուղերով ու հրկիզված խրճիթներով», իսկ մազապուրծ եղած հայերը դատապարտված են կործանման, որովհետև «ցուրտը, սովը, թշվառությունն անպատիժ ձևով ավարտին են հասցնում մարդասպանների գործը»[34]:

Ինչ վերաբերում է արևմտահայերին օժանդակություն ցուցաբերելու հարցին՝ Լերուա-Բոլիոն առաջարկում է լռությամբ շրջանցել Թուրքահայաստանի ինքնավարության կամ անկախության պահանջը: Հաշվի առնելով XIX դ. վերջերին Եվրոպայում տեղի ունեցած ռազմաքաղաքական ուժերի վերադասավորումը և Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում առկա ազգությունների ու կրոնների բազմերանգ խճանկարը, նա

31 Նույն տեղում, էջ 33, 34:

32 Նույն տեղում, էջ 34, 35:

33 Նույն տեղում, էջ 35: Այս հարցի վրա մեծապես լույս է սփռում «Նոր-դար» թերթի թղթակից Ստեփանոս Սապահ-Գյուլյանի վկայությունը, որի խնդրանքով ֆրանսիացի պատմաբանը հանդես էր եկել այս դասախոսությամբ: Ըստ նրա, Արտաքին գործերի նախարար Հանոտոն խնդրել էր հռետորին «չափավոր լեզու գործածել» (տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան. Պատասխանատուները. Պրովիդենս, 1916, էջ 153):

34 Նույն տեղում, էջ 34, 36:

հայկական ինքնավարության պահանջը համարում է «երազանք»: Փոխարենը, եվրոպական երկրների համար նա անհրաժեշտ է համարում Բարձր Դռնից պահանջել «աշխարհի առջև Եվրոպային խայտառակող վայրագությունների» կասեցումը և «համանման բարբարոսության կրկնությանը» խոչընդոտող զանազան, այդ թվում հայերի համար ապրելու, աշխատելու, կրոնը դավանելու երաշխիքներ[35]:

Լերուա-Բոլիոն քննադատում է մեծ տերությունների անկարեկից վարքագիծը հայերի ցեղասպանության հարցում, ֆրանսիական մամուլի լռակեցությունը, հայերի հեղված արյունը համարում «գիվանագիտության անշրջահայացության և անփութության» հետևանք[36]: *Նա «Եվրոպայի պարտականությունն» է համարում Թուրքիայում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ վերահսկողության սահմանումը, որն, ըստ նրա, հնարավորություն կընձեռեր հայերի կոտորածները կասեցնելու միջոցով ի չիք դարձնել Օսմանյան կայսրության ներքին գործերին եվրոպական տերություններից որևէ մեկի զինված միջամտության հավանականությունն ու հողմացրիվ անել մեծ պատերազմի բռնկման հեռանկարը: Լինելով Թուրքիայի ամբողջականության պահպանման ջերմեռանդ կողմնակից, երկյուղելով նրա տրոհումից, Լերուա-Բոլիոն մեծ շահագրգռվածություն է հանդես բերում մասնավորապես նրա տարածքում բնակվող ժողովուրդների անվտանգությունն ապահովելու հարցում, որը դիտում է իբրև Օսմանյան կայսրության գոյատևման ամենաանհրաժեշտ նախապայման: Հակառակ դեպքում, նրա համոզմամբ, կայսրությունը «մեկը մյուսի ետևից կկորցնի իր բոլոր եվրոպական նահանգները, իր բոլոր ասիական նահանգները... Ահա հենց սրանից է, որ թե՛ հանուն Դռան, թե՛ հանուն Եվրոպայի, մենք ցանկանում ենք խուսափել. և այդ աղետը վանելու համար այն, ինչ մենք պահանջում ենք, պարոնայք, ես կասեմ մեկ բառով՝ դա այնպիսի Թուրքիա ունենալն է, որը բնակվելու համար պիտանի լինի, այնպիսի Թուրքիա, որը բնակվելու համար պիտանի լինի ամենքի՝ թե՛ քրիստոնյաների, թե՛ մահմեդականների համար»*[37]:

Ինչպես տեսնում ենք, Լերուա-Բոլիոն, կամա թե ակամա, այս դասախոսությամբ հանդես է գալիս փաստորեն ոչ այնքան իբրև հայերի, որքան եվրոպական երկրների միջև գոյություն ունեցող հավասարակշռության պահպանման մոլի պաշտպան՝ հմտորեն օգտագործելով հայկական խաղաքարտը: Ամեն դեպքում, նրա ելույթը, անկախ իրադարձություններին տրված՝ հաճախ անընդունելի մեկնաբանությունների հանգամանքից, անկասկած, նպաստել է լռության այն ամուր պատնեշի սասանմանը, որը հայկական կոտորածների եղելությունն անջրպետում էր ֆրանսիական հասարակայնության լայն խավերից: Այդ առթիվ, ի դեպ, տարիներ անց, նա հայտարարել է. «Ես առաջինն էի, որ Փարիզում, կոտորածների շուրջ

35 *Նույն տեղում, էջ 38, 39:*
36 *Նույն տեղում, էջ 20, 32:*
37 *Նույն տեղում, էջ 40:*

տիրող լռության ժամանակաշրջանում, հայերի համար հանդես եկա ելույթով»[38]:

Ֆրանսիայում հնչած հրապարակային ելույթների շարքում ակադեմիական բարձր մակարդակով և վերլուծությունների խորությամբ առանձնանում է ֆրանսիացի ականավոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897 թ.) Ալբեր Վանդալի (1853-1910) ելույթը, որն անուրանալի ավանդ ունի Հայ դատին սատար կանգնելու, հայերի ցեղասպանության կազմակերպիչներին անարդանքի սյունին գամելու և հայ ժողովրդի իրավունքները պաշտպանելու ասպարեզում: Լինելով ոչ միայն խոշոր նապոլեոնագետ, այլև XVIII դ. ֆրանս-թուրքական դիվանագիտական հարաբերությունների պատմության ուսումնասիրող[39], նա, բնականաբար, ամենայն ուշադրությամբ էր հետևում Օսմանյան կայսրության տարածքում ծայր առած իրադարձությունների ընթացքին: Բացի դրանից, պատմագիտական ահռելի գիտելիքների տեր գիտնականը հիանալիորեն պատկերացնում էր Օսմանյան կայսրության զարգացման պատմական օրինաչափությունները, նրա տեղն ու դերն իր օրերի եվրոպական մեծ տերությունների քաղաքականության տատասկոտ խաչմերուկներում, Հայկական հարցի բուն էությունն ու ցեղասպանության դրդապատճառները:

Քաղաքացիական կայուն դիմագիծ ունեցող պատմաբանը չէր կարող, հարկավ, լռությամբ շրջանցել Աբդուլ Համիդի սանձազերծած հայկական կոտորածները, որոնք նրան դրդել են 1897 թ. փետրվարի 2-ին Փարիզի Աշխարհագրական ընկերության սրահում՝ շուրջ 1.500 ունկնդիրների ներկայությամբ, հանդես գալու այդ հարցին նվիրված հրապարակային ելույթով[40], որը Պ. Կուլբոն՝ նույն հարցին նվիրված իր դասախոսության ընթացքում բնութագրել է իբրև «սքանչելի»[41]: Որոշ ժամանակ անց, Վանդալի ելույթը հրատարակվել է առանձին գրքույկի ձևով[42]:

---

38 La Manifestation au Theatre du Chateau-d'Eau de Paris (15 fevrier 1903).– Pour l'Armenie et la Macedoine. Preface de V. Berard. Introduction de P. Quillard. Paris, 1904, p. 59. *Հիրավի, Սպահ-Գյուլյանը ևս հավաստում է, որ Լերուա-Բոլիոյի գրքույկի լույս ընծայումից հետո (ի դեպ, 10.000 օրինակով), «հասարակական խնդիրներով պարապող մեկը չմնաց, որ մեծանուն դասախոսի մտքերին հաղորդակից չլիներ» (տե՛ս Ս. Ս ա պ ա հ - Գ յ ո ւ լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 154): Նշենք նաև, որ Լերուա-Բոլիոյի գրքույկին նվիրված ընդարձակ հոդված է լույս ընծայել «Մշակ» թերթը, որտեղ ոչինչ չի ասվել հայոց ցեղասպանության մեկնաբանության հարցում հեղինակի գրված դիրքորոշման մասին, բայց փոխարենը՝ քննության առարկա են դարձել հայերի անցյալի, դավանանքի հետ կապված երկրորդական բնույթի հարցերին վերաբերվող նրա տեսակետները (տե՛ս «Մշակ», 1896, N 100): Ավելի լայն կտրվածքով, սակայն, վերստին առանց վերլուծական մոտեցման՝ Լերուա-Բոլիոյի գրքույկը ներկայացվել է նաև ֆրանսիական մամուլում (տե՛ս* Les Arméninis et la question armenienne, conference faite par M. Anatole Leroy-Beaulieu.– La verite ...., p. 121-125):

39 A. V a n d a l. Une ambassade française en Orient sous Louis XV. Paris, 1887; *Ն ո ւ յ ն ի՝* Napoleon et Alexandre ler. T. 1-3. Paris, 1891-1896; *Ն ո ւ յ ն ի՝* L'avenement de Bonaparte. T. 1-2. Paris, 1902-1907.

40 *Համաձայն Սպահ-Գյուլյանի վկայության՝ «երբեք մի դասախոսություն դեռ այդքան մեծ հետաքրքրություն և ոգևորություն չէր առաջացրել».– «Նոր-դար», 1897, № 31:*

41 P. C o u l b a u t. Les massacres d'Armenie et le role des puissances europeennes.– "Revue des facultés catholiques de l'ouest" (Paris), juin 1889, p. 14.

42 Les Armeniens et la reforme de la Turquie. Conference faite par M. Albert Vandal de l'Academie française dans la salle de la Sociéte de Geographie. Le 2 février 1897. Paris, 1897. *Տե՛ս նաև Ա լ բ ե ր Վ ա ն դ ա լ. Հայերը և բարենորոգումները Թուրքիայում. Երևան, 2001:*

Վկայակոչելով բազմաթիվ անհերքելի փաստեր՝ Վանդալն անկողմնակալ ուրվագծել է Օսմանյան կայսրությունն ալեկոծած աննախադեպ իրադարձությունների համայնապատկերը, դրանց տվել հավաստի գնահատականներ: Արևմտահայերի կոտորածները Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում նա բնութագրել է իբրև «մեծադույն սպանդ», «հրեշավոր արարք», այն ժամանակների վերադարձ, «երբ թուրքմենական հորդաներն էին ասպատակում քաղաքակիրթ և քրիստոնեական Ասիան»[43]: Նրա համոզմամբ՝ արևմտահայերի ջարդերի համեմատությամբ «1822 թ. Քիոսի, 1860 թ. Լիբանանի, 1876 թ. Բուլղարիայի կոտորածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ մանկական խաղեր»: 1894 թ. օգոստոսին Սասունի շրջանում տեղի ունեցած կոտորածների մասին, օրինակ, նա գրում է. «Երբ քրիստոնյաներով բնակեցված որոշ գյուղերում հրաժարվեցին արդեն վճարված հարկը կրկին վճարելուց, անկանոն զորքերը և համիդիեները հարձակվեցին երկրամասի վրա: Ավելի քան երեսուն գյուղեր հրկիզվեցին, բնակչությունը զանգվածաբար ոչնչացվեց և երբ մասամբ միջազգային քննիչ հանձնաժողովն այս վայրերը ժամանեց, հանդիպեց մարդկանց դիակներից բաղկացած մի սարի, դիակներից ուռճացած գետնի»[44]: Ինչ վերաբերում է հայերի ցեղասպանության դրդապատճառներին, ապա Վանդալը դրանք պայմանավորում է հայկական կոմիտեների գործունեությամբ, նշելով սակայն, որ դրա «ակունքներն իրենց հերթին բխում էին չարաշահումներից, աննկարագրելի բռնություններից և պայմանագրերի չկենսագործումից»[45]:

Համաձայն Վանդալի դիրքորոշման՝ հայերի եղեռնն իրականացվել է ոչ թե տարերայնորեն, այլ ըստ նախօրոք ծրագրված և մանրակրկիտ մշակված նախագծի: Նա մասնավորապես ընդգծում է սուլթանի համախոհներից բաղկացած՝ Պալե անունը կրող տխրահռչակ հանցախմբի վճռորոշ դերը հայկական կոտորածների նախապատրաստման գործում: Անդրադառնալով Տրապիզոնում, Էրզրումում, Դիարբեքիրում, Մուշում, Ուրֆայում, Բիթլիսում, Վանում, Սըվազում, Կեսարիայում, Մալաթիայում սանձազերծված կոտորածներին, նա առանձնահատուկ նշանակություն է տալիս մասնավորապես լայն տարածում գտած «Ղեկավարը թույլատրում է սպանել հայերին» ասույթին, որը թևածելով ամենուր՝ «մի քանի շաբաթում, միայն այն վայրերում, ուր եվրոպական հյուպատոսներն էին բնակվում», պատճառ էր դարձել ավելի քան երեսուն հազար զոհերի: «Հայաստանի մակերեսը,– նշում է նա,– ծածկվում է կարմիր բծերով, որոնք բազմանում են, ընդարձակվում, մոտենում միմյանց և համապատասխանում քաղաքների տեղավայրերին»[46]:

Պատմաբանի ուշադրությունից չի վրիպել միաժամանակ զորքերի, համիդիե ջոկատների և մոլեռանդ մահմեդական բնակչության՝ կոտորածների իրականացման գործում ունեցած եռանդուն մասնակցությունը: «Քաղաքներում հաշվեհարդարն իրագործում են զորքերը և մոլեռանդ մահմե-

43 Les Armeniens et la reforme de la Turquie, p. 14, 15, 17.

44 Նույն տեղում, էջ 15, 35:

45 Նույն տեղում, էջ 13:

46 Նույն տեղում, էջ 16:

դական բնակչությունը: Նրանք հարձակվում են քրիստոնյաների վրա, սպանում տղամարդկանց, կանանց, երեխաներին. այս ամենը չլսված, չտեսնված զազրելիություններ և վայրագություններ են: Կապկված և անշարժ ծնողների ծնկների վրա մասերի են կտրատում նրանց երեխաներին, մսագործներն իրենց կրպակներում ցուցադրում են հայերի մասնատված մարմինները. սրանք ներոնյան պատրանքներ են, հայերը՝ որոնց վրա նավթ են լցնում, այրվում են ինչպես ջահեր: Մինարեթների բարձունքից մյուղենները ժողովրդին աղոթքի կոչելու փոխարեն՝ կոչում են կոտորածի, դաժանության, այնուհետև նրանք մարդասպաններին մատնացույց են անում քրիստոնյային, որը փախչում է, թաքնվում տների միջև, հետապնդողների համար ճշգրտում են նրա տեղը և մարդկանց որսը, այս դժոխային որսը շարունակվում է»[47]:

Ամենևին մոռացության չտալով թե՛ կրոնական գործոնի, թե՛ մահմեդական մոլեռանդության ունեցած կործանարար դերը հայկական կոտորածներում, Վանդալը, այդուհանդերձ, ուշադրությունը սևեռում է հայերի նկատմամբ սուլթանի վարած քաղաքականության գլխավոր միտումի՝ ցեղասպանության միջոցով նրանց բնաջնջելու հանգամանքի վրա. «Այս ամենը,– գրում է նա,– կատարվում է Պալեի հրահրմամբ, նրա հրամանով: Պալեի համար ֆանատիզմը սպանության մեքենա է, որի ընթացքը նա շարժման մեջ է դնում, ըստ իր հայեցողության ակտիվացնում, կարգավորում»: Մեկ այլ առիթով, նա շեշտում է. «դոյության փոքր իսկ նշանի առկայության դեպքում նրան (հային – Վ. Պ.) սպանում են»[48]:

Ակնհայտ է, որ ֆրանսիացի պատմաբանն արևմտահայերի կոտորածներն իրավամբ դիտում է իբրև պետականորեն իրականացվող քաղաքականություն: Այդ մասին են վկայում նաև նրա՝ Կոստանդնուպոլսում 1896թ. հայ գրոհայինների կողմից Օսմանյան բանկի գրավման դիպվածին տված մեկնաբանությունները: Այս հարցում Վանդալն ուշադրություն է դարձնում այն անձանց խորամանկ ու նենգ վարքագծի վրա, որոնք իրականացնում էին պետության ղեկավարի մտահղացումները. «Դավաճանները նախապես «Պալեին» իրազեկ էին դարձրել նրանց (գրոհայինների – Վ. Պ.) մտադրությանը, բայց վերջինս թույլ է տվել, որ այդ փորձն ի կատար ածվի, որպեսզի այն օգտագործի իբրև պատրվակ՝ հայերի, անպաշտպան հայերի համատարած կոտորածի համար»: Հետևաբար, սուլթանի որդեգրած քաղաքականությունն այս հարցում նա բնութագրում է իբրև միապետի կողմից՝ իր իսկ հպատակների մի ստվար հատվածի դեմ հյուսված դավադրություն[49]:

Ըստ այս ամենի, և չանսալով Արտաքին գործերի նախարար Հանոտոյի՝ «շատ խիստ հարձակողական դիրք» չգրավելուն առնչվող խնդրանքին[50] Վանդալն Աբդուլ Համիդին անվանել է «աշխարհին երբևէ հայտնի՝ մարդկանց ամենամեծ դահիճներից մեկը» և պատմության մեջ առաջին անգամ նրան անվանել «Կարմիր սուլթան», որը «դատապարտված է ավելի վատ-

47 Նույն տեղում:
48 Նույն տեղում, էջ 16–17, 20:
49 Նույն տեղում, էջ 14, 19:
50 Ս. Սապահ-Գյուլյան. Նշվ. աշխ., էջ 154:

թար վիճակի, քան հաղարավոր հանդուցյալները և որն այս կայսրությունում, որտեղ այդքան մարդկային էակներ են տառապում, միմյանց ատում և իրար սպանում, ամենամեղավորն է ու ամենադժբախտ ամենքից»[51]:

Քաջ գիտակցելով իր՝ իբրև պատմաբանի բարոյական ու քաղաքացիական պարտքը, Վանդալը չի բավարարվել սոսկ փաստերի թվարկումով և ելույթի երկրորդ մասը նվիրել է ստեղծված անելանելի կացությունը շտկելու ուղիների որոնմանը: Համաձայն նրա համոզման «Թուրքիան ընդունակ չէ բարենորոգվելու: Հետևաբար, հարկ է նրան բարենորոգել բռնի միջոցներով»: Օսմանյան կայսրությանը ֆինանսական համատիրություն պարտադրող վարչակարգի հաստատումը համարելով «արդյունավետ դեղամիջոց», նա, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն կատաղի դիմադրությունները, որոնց այդ տարբերակն անվարանորեն կյանքի կկոչի, գերադասել է դրանից ձեռնպահ մնալ՝ նախապատվությունը տալով տեղական բնույթի բարենորոգումների կենսագործման անհրաժեշտությանը (խոսքը մասնավորապես վերաբերում է վերահսկողության ներքո գտնվող և երաշխիքներ ունեցող տեղական բարենորոգումների համակարգի հաստատմանը, հայկական նահանգներում եվրոպացի կառավարիչների նշանակմանը, հարկերի գանձման կարգավորմանը, անկողմնակալ արդարադատության հաստատմանը և այլն)[52], որոնք, նրա կարծիքով, ոչ միայն կկասեցնեին արևմտահայերի ջարդերը, այլև շեշտակիորեն կբարելավեին նրանց վիճակը: Հարցի լուծումը հաջողությամբ պսակելու համար, ըստ նրա, անհրաժեշտ էր, որ Ֆրանսիան հող նախապատրաստեր «հանուն փոխզիջումների ու համաձայնության կայացման, դառնար բոլոր բարի ցանկությունների կենտրոն և համախմբման վայր»[53]: Ուստի, նա ֆրանսիացի դրողներին, հրապարակախոսներին, հասարակական և կրոնական դործիչներին կոչել է ձևավորելու կառավարության հայանպաստ քաղաքականությանն օժանդակող հասարակական կարծիք:

Ամբողջությամբ ձեռնպահ մնալով եվրոպական երկրների ղեկավար շրջանների և ֆրանսիական կառավարության կողմից՝ Հայկական հարցի և արևմտահայերի ցեղասպանության նկատմամբ դրսևորված անտարբեր վերաբերմունքի քննադատությունից, Վանդալը բավարարվել է Ֆրանսիայի արևելյան քաղաքականության առանձնահատկությունների մանրակրկիտ վերլուծությամբ, ելնելով իր պետության շահերից՝ ընդգծել, ի թիվս այլոց, Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու անհրաժեշտությունը: Իբրև 1893-1895 թվականներին ձևավորված ռուս-ֆրանսիական դաշինքի ջատագով, Վանդալն այս հարցի լուծման հեռանկարը շաղկապել է ռուս-ֆրանսիական հարաբերությունների հետագա զարդացմամբ: Ընդունելով հանդերձ, որ դաշնակիցների «շահերն Արևելքում չեն համընկնում», նա չի բացառել այդուհանդերձ հաշտության եղրեր գտնելու հավանականությունը, նույնիսկ պնդել է, որ «այս ուղղությամբ համատեղ

51 Նույն տեղում, էջ 13, 21:
52 Նույն տեղում, էջ 35–37:
53 Նույն տեղում, էջ 49:

գործունեությունը և անդամ նախաձեռնությունը և՛ մեկ, և՛ մյուս տերության համար կլինեն նույնքան օգտակար, որքան և պատվաբեր»[54]:

Իր մտորումների ընթացքում Վանդալը տուրք է տվել Ֆրանսիայի արտաքին քաղաքականության մարդասիրական բնույթի գերագնահատմանն Արևելքում, գունազարդել կառավարող շրջանների բարյացակամ դիրքորոշումն արևելյան հարցում: Սակայն կասկածից վեր է և այն, որ եթե եվրոպական պետությունների ղեկավարները նրա առաջարկությունները կենսագործելու ցանկություն դրսևորեին, ապա դրանք, անկասկած, արդյունավետ կլինեին:

90-ական թվականների ջարդերին հաջորդած ժամանակաշրջանում մեծ տերությունների ղեկավար շրջանները շարունակել են դրսևորել նախկին անվշտակից վերաբերմունքը հայերի ճակատագրի նկատմամբ, որն արդեն Վանդալի կողմից հպանցիկ հիշատակվել է 1903 թ. Ժնևում «Եվրոպայի հայ ուսանողների միության» աջակցությամբ վերահրատարակված նրա ելույթին կից հակիրճ առաջաբանում[55]: Թե՛ դրքույկի վերահրատարակությունը, թե՛ խնդրո առարկա առաջաբանը վկայում են ոչ միայն Վանդալի հետևողականության և սկզբունքայնության, այլև հայ ժողովրդի գոյատևման հարցում նրա ունեցած անկեղծ շահագրգռվածության մասին:

1897 թ. է կայացել նաև Փարիզի բարձրագույն հետազոտությունների դպրոցի պրոֆեսոր Լեոն Մարիլիեի՝ Հայկական հարցին նվիրված դասախոսությունը, որը, թեև հեղինակի շոշափած հիմնահարցերի բազմազանության և առաջադրած գիտական մեկնաբանությունների ընդգրկման առումով ակնհայտորեն զիջում է Վանդալի ելույթին, այնուամենայնիվ, զուրկ չէ հետաքրքրությունից: Խիստ ուշագրավ են մասնավորապես վերջինիս դիտարկումներն արևմտահայերի քաղաքական դիտավորությունների շուրջ: Դիցուք, վերլուծելով Սասունի հայկական գյուղերում քրդերի պարբերական բնույթ կրող ասպատակություններին առնչվող խնդիրը, հեղինակը նշում է թե՛ հայերի շրջանում դրանց հետևանքով առաջ եկած դժգոհությունների, թե՛ վերջիններիս մոտ «առճակատում հրահրելու» ցանկության բացակայության մասին: Միևնույն հարցը քննարկելով շատ ավելի լայն կտրվածքով, իբրև թուրքերի կողմից իրերի հավաստի պատկերի խեղաթյուրման պատասխան՝ Մարիլիեն հայտարարել է. «Նրանք (հայերը – Վ. Պ.) չեն ձգտում անկախության, որն անհնարին էր դառնում աշխարհագրական տեսակետից նրանց երկատման պատճառով, այլ կցանկանային, որ բարենորոգումներ իրականացվեին այն վարչակարգում, որի ենթակայության ներքո էին գտնվում և այդուհետև իրենց կյանքը, ունեցվածքը, կանանց և աղջիկների պատիվը պաշտպանվեր հարևան քրդերի ու չերքեզների բռնություններից, բիրտ կրքերից և անհագությունից»[56]:

Թեև մակերեսորեն, հեղինակն այդուհանդերձ վկայակոչում է Հայկական հարցի գոյության փաստը, Բեռլինի վեհաժողովի կողմից պարտադրված բարենորոգումների տխուր ճակատագիրը, բազմաթիվ առիթներով մանրազնին անդրադառնում հայերի անապահով վիճակին: «Այն հայերին,

54 Նույն տեղում, էջ 46, 48:
55 A. V a n d a l. Les Armeniens et la reforme de la Turquie. Geneve, 1903, p. 3.
56 L. M a r i l l i e r. La question arménienne. Paris, 1897, p. 2, 3.

որոնք իրենց ապրանքները, տները, կանանց պատիվը և երբեմն սեփական կյանքը պաշտպանելու հանցանքն են գործել նետում են բանտ»,– գրում է նա[57]:

Ինչ վերաբերում է թուրքական կառավարության քաղաքականության ելևէջներին, որը հայերին հանիրավի կասկածում էր անկախ և ինքնուրույն Հայաստան կազմավորելու վափագներ գուրգուրելու մեջ, ապա Մարիլիեն հայերի նկատմամբ նրա դիրքորոշման կտրուկ վոփոխությունն իրավամբ կապում է մեծ տերությունների կողմից պարտադրվող բարենորոգումների ծրագրի կենսագործման պահանջի հետ: Ստեղծված պայմաններում սուլթանը հայերին սկսում է դիտել իբրև նենգ հպատակների, ուստի նրա և օսմանյան պաշտոնյաների միջև ձևավորվում է հայացքների ընդհանրություն, որի արդյունքում վերջիններս բազմապատկում են հայերի հալածանքները[58]: *Թեև հայկական եղեռնը հեղինակն ուղղակիորեն չի դիտում իբրև մի իրադարձություն, որը ծնունդ էր առել սուլթանի որոշեդրած՝ Հայկական հարցին վերջնական լուծում տալու «միակ» հնարավոր եղանակի կենսագործման հետևանք, այդուհանդերձ հստակորեն մատնացույց է անում օսմանյան միապետի և պաշտոնատար անձանց ղեկավարդերը կոտորածներին ընթացք տալու հարցում, որոնք, ամեն բանից զատ, ջանում էին զոհերին իբրև մեղավորներ ներկայացնելու միջոցով «զանգվածային սպանդին» օրինականություն հաղորդել*[59]:

Այսպես, ամբողջ ելույթի ընթացքում, Մարիլիեն ամենևին չչրջանցելով ջարդարարների գործած վայրագությունները, անվանելով նրանց «բարբարոսներ»[60], *պարբերաբար ընդգծում է թուրքական իշխանությունների կոտորածներին ունեցած մեղսակցության հանդամանքը: Օրինակ, 1895 թ. Արևմտյան Հայաստանի բազմաթիվ քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած ջարդերի առիթով նա մասնավորապես մատնանշում է «տեղական իշխանությունների լռակյաց հանցակցությունը, որոնց դիրքորոշումն անկասկած կյանքի է կոչվել ավելի վերին շրջաններից, իսկ երբեմն՝ հստակ հրամանների հիման վրա»*[61]: *Հեղինակի համանման դիտարկումներին ենք հանդիպում նաև 1896 թ. Բիթլիսում, Մարաշում, Ուրֆայում և այլ վայրերում տեղի ունեցած կոտորածների դրվագների նկարագրության ընթացքում*[62]: *Յեղասպանության գլխավոր պատասխանատու համարելով Աբդուլ Համիդին, նա հեգնանքով ակնարկում է հայկական կոտորածների հարցում մեղքի բաժինն ունեցող օսմանյան պաշտոնյաների հանդեպ սուլթանի «բարյացակամ» վերաբերմունքի անսասանությունը*[63]:

Միաժամանակ Մարիլիեն քննադատական խոսքեր է ուղղել եվրոպական տերությունների հասցեին՝ սուլթանի հետ մեկտեղ նաև իրավամբ նրանց վրա բարդել կոտորածների պատասխանատվությունը: Եվրոպական

57 Նույն տեղում, էջ 9:
58 Նույն տեղում, էջ 5, 6:
59 Նույն տեղում, էջ 9:
60 Նույն տեղում:
61 Նույն տեղում, էջ 15:
62 Նույն տեղում, էջ 17–18:
63 Նույն տեղում, էջ 14:

տերությունները պարտավոր էին, ըստ նրա, կոտորածից, բռնի կրոնափոխությունից փրկել մի ժողովրդի, որի «միակ զանցանքը նրանում էր, որ թույլատրել է իրեն մորթել առանց դիմադրության»: Եվրոպայի միջամտությունը դիտելով իբրև միջազգային պայմանագրերի միջոցով հավաստված իրավաբանական պարտավորություն, Մարիլիեն շարունակում է. «Նա կարող էր, եթե այդ ցանկանար, անել այն, ինչ պետք է աներ. նա ի զորու էր, սակայն չցանկացավ այդ անել»[64]:

1899 թ. փետրվարի 24-ին Անժերի Կաթոլիկական համալսարանում կայացել է Պ. Կուլբոյի՝ հայերի ցեղասպանությանը նվիրված հրապարակային ծավալուն դասախոսությունը: Հենվելով թե՛ այդ շրջանում արդեն լույս ընծայված ֆրանսիական, թե՛ անգլիական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուներում ամփոփված հարուստ նյութերի վրա, նա, ինչպես և Վանդալը, ցուցաբերել է ընդգրկուն մոտեցում բազմասլիսի առանցքային հարցերի վերհանմամբ: Հեղինակի դիրքորոշումը խարսխվում է մի շարք դրույթների՝ Օսմանյան կայսրությունում հայերի ծանր կացության, բարենորոգումների անցկացման հարցում՝ Բարձր Դռան չկամության, Օսմանյան կայսրության կողմից պետական մակարդակով իրականացվող ցեղասպանության, եվրոպական տերությունների քաղաքականության քննադատության վրա:

Համաձայն նրա մեկնաբանությունների՝ հայերի վիճակը 1877–1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո դարձել էր ավելի վատթար, քանզի «սուլթանն իրականացրել էր բազմաթիվ բարենորոգումներ միայն թղթի վրա և ոչ ավելին»[65]: Ըստ նրա, թեպետ հայերի գանգատները որևէ արձագանք չեն գտել, թուրքերը, սակայն, անվարան դիմել են իրենց խիստ բնորոշ մեթոդներին: «Այդ մեթոդները,– գրում է Կուլբոն,– հայտնի են ամենքին: Պահպանելու համար իրենց տիրապետությունը՝ թուրքերը երբևէ չեն խորշել դիմելու ամենաարյունալի միջոցների: Այնժամ, երբ հույներն են անհանդստություն պատճառում, նրանց կոտորում են, այնժամ, երբ ենիչերիներն այլևս պիտանի չեն դառնում, նրանց գնդակոծում են, երբ հայերն են գանգատվում, նրանց բնաջնջում են»[66]:

Ջանտեսելով այն էական դերը, որը սուլթանի կայացրած որոշումների կենսագործման և իրադարձությունների հետագա ընթացքի վրա ունեցել են թե՛ կրոնական գործոնը, թե՛ մահմեդական մոլեռանդությունը, Կուլբոն շարունակ ուշադրության կենտրոնում է պահում հայերի հանդեպ պետականորեն դրսևորվող քաղաքականության հանգամանքը: «Դուռը վճռել էր ոչնչացնել հայերին երկաթի, կրակի և սովի միջոցով»,– հավաստում է նա: Ըստ նրա, 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայերի ջարդերը հետևանք էին Պալեի արձակած հրահանգների, իսկ երկարատև ամիսների ընթացքում կանոնավոր զորքերի կողմից հազարավոր քրիստոնյաների սպանդն իրականացվել էր համաձայն անձամբ սուլթանի արձակած հրամանների[67]:

---

64 Նույն տեղում, էջ 19:

65 P. C o u l b a u t. Նշվ. աշխ., էջ 3, 4:

66 Նույն տեղում, էջ 5:

67 Նույն տեղում, էջ 5, 10, 14:

Աբդուլ Համիդի որդեդրած՝ հայերի ծավալուն ջարդերի քաղաքականության մեկնակետը համարելով 1894 թ., Կուլբոն, այդուհանդերձ, գտնում է, որ լայնահուն կոտորածների սանձազերծմանը մեծապես նպաստել է 1895 թ. աշնանն Օսմանյան կայսրությունում թևածող սուլթանի կողմից քրիստոնյաներին զիջումներ անելուն վերաբերող շշուկը, որն Արևմտյան Հայաստանի զանազան նահանգներում հանդեցրել է «սուլթանի պաշտոնյաների կողմից ղեկավարվող» մեծածավալ ջարդերի: «Այդ պահից ի վեր, զոհերի թիվը հարկ է համրել հազարներով, այլ ոչ թե հարյուրներով... Գրեթե երեք ամսվա ընթացքում հայերի կողմից բնակեցված բոլոր գյուղերը կողոպտվել են, այնուհետև՝ հրկիզվել, բնակիչները՝ ոչնչացվել»: Կոտորածին ավելի մեծ թափ հաղորդելու դիտավորությամբ է, որ «Աբդուլ Համիդը քրդերին բաժանել է մի քանի թնդանոթներ և կատարելագործված հրացաններ»[68]:

Կուլբոյի ելույթում մեծ տեղ է հատկացված եվրոպական պետությունների քաղաքականության վերլուծությանը, որը նրան դրդել է խստադույնս դատապարտելու վերջիններիս կողմից՝ հայերի ողբերգությանն ի տես դրսևորվող քամահրական վերաբերմունքը: «Հայերի ճակատագիրը,– գրում է նա,– տերություններին առանձնապես չի անհանգստացնում ֆինանսական հարցից զատ, խոսքը նրանց համար նախ և առաջ վերաբերում է այն բանին, որ խոչընդոտեն իրենցից որևէ մեկի ազդեցության ընդլայնմանը կամ նրա տարածքի ընդարձակմանը»[69]: Տերությունների վարած քաղաքականության ոլորտում նա առանձնացնում է նրանց կողմից անվերապահորեն որդեգրված՝ Թուրքիայի ամբողջականության պահպանման և տարանջատ դործողություններից ձեռնպահ մնալու սկզբունքները: Զանտեսելով, սակայն, նրանց պառակտող տարաձայնությունները, Կուլբոն ծալրի է ենթարկում այսպես կոչված «եվրոպական համաձայնությունը» տերությունների կարծեցյալ միասնական դործողությունը, որը հենվում է նրանց միջև առկա «վոխադարձ անվստահության և ատելության վրա» և «ծնունդ է առել ոչ թե հետաքրքրությունների ընդհանրությունից, այլ նկրտումների հակադրությունից»: Հենց այս դիրքերից է նա մոտենում նաև Հայկական հարցի լուծմանը ռուս-ֆրանսիական դաշինքի լույսի ներքո՝ անհնարին համարելով, ի տարբերություն Վանդալի, «հակասական շահերի հաշտեցումը»[70]:

Եվրոպական պետությունների շարքում Կուլբոն, սակայն, բացառություն է անում Ֆրանսիայի համար՝ նրան ներկայացնում իբրև քրիստոնյաների երդվյալ հովանավորի, որի «բարի համբավն աշխարհում բաղմաթիվ դաբեր ի վեր նրան վերածել է ազդությունների խաղաղասեր դատավորի»: Թուրքիայի ամբողջականության պահպանումը համարելով Ֆրանսիայի արտաքին քաղաքականության վաղեմի սկզբունքներից, նա համոզմունք է հայտնում, որ Ֆրանսիան այդուհանդերձ երբևէ չի հրաժարվել իր օժան-

68 Նույն տեղում, էջ 7, 10, 11–13:
69 Նույն տեղում, էջ 26:
70 Նույն տեղում, էջ 26-29:

դակությունը ցուցաբերելու քրիստոնյաներին՝ մահմեդականների հետ նրանց ունեցած հակամարտության խաչուղիներում"[71]:

Հայերի փրկության հարցում Ֆրանսիայի քաղաքականության ձախողումը նա մեկնաբանում է Արևելքում բողոքականության տարածմամբ, որը տեղիք է տվել Անգլիայի և հատկապես Գերմանիայի վարկի բարձրացմանը: Հենց դրանով է նա պայմանավորում Ֆրանսիայի ջանադրության փոխարինումը «եվրոպական համաձայնության» անպտուղ գործունեությամբ:

Վանդալի հետքերով գունազարդելով Ֆրանսիայի արևելյան քաղաքականությունը և նրան ներկայացնելով Արևելքի քրիստոնյա ժողովուրդների ջերմեռանդ հովանավորի դերում՝ Կուլբոն դրանով իսկ ստանձնում է իր երկրի պետական քաղաքականության ջատագովի դերը: Հարկ է միաժամանակ նշել, որ, գովերգելով Ֆրանսիայի քաղաքականության մարդասիրական բնույթն Արևելքում, Կուլբոն հայերի ցեղասպանության կասեցման ուղղությամբ ֆրանսիական կառավարող շրջանների գործադրած «չահագրգռվածությունն» ու «հետևողականությունը» չի հիմնավորում որևէ փաստով:

Ֆրանսիայում համիդյան կոտորածներին նվիրված հրապարակային դասախոսություններով հանդես են եկել նաև կրոնական գործիչները, մասնավորապես աբբա Պիզանին և հայր Շարմետանը: 1896 թ. մայիսի 3-ին Փարիզի Կաթոլիկական ինստիտուտում կայացել է այս հարցին նվիրված աբբա Պիզանիի ծավալուն ելույթը[72]: Վերջինիս հետաքրքրությունը կործանման դատապարտված արևմտահայության ճակատագրի հանդեպ ծագել է դեռևս 1895 թ.[73]: Աբբա Պիզանիի հրապարակային դասախոսությունը տարբերվում է նրա նախորդ ելույթից, քանզի ծանոթությունը 1896թ. հայր Շարմետանի կողմից հրատարակված «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուում[74] զետեղված՝ ֆրանսիական և հայկական ծագում ունեցող վավերագրերի հետ, մեծապես նպաստել է կոտորածների ծավալի, զոհերի քանակի շուրջ նրա ունեցած պատկերացումների ընդլայնմանը:

Աբբա Պիզանին Հայկական հարցը քննարկել է Օսմանյան կայսրության տարածքում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած զանազան անցքերի լայն հենքի վրա, բազմիցս մատնանշել Հունաստանում, Լիբանանում, Բուլղարիայում տեղի ունեցած քրիստոնյա ժողովուրդների կոտորածները: Դա, անկասկած, նրա մոտեցման առավելությունն է: Օսմանյան իշխանությունների կողմից քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ գործադրվող բռնությունները, տնտեսական կեղեքումը, կայսրության տարածքում նրանց համար արդարադատության բացակայությունը նա մեկնաբանել է միմիայն քրիստոնյաների և մահմեդականների դավանանք-

---

71 Նույն տեղում, էջ 14-16:

72 L'abbé P. P i s a n i. Les massacres d'Armenie. Conference faite a l'Institut Catholique de Paris le 3 mai 1896. Paris, 1896. Այս գրքույկի պատճենը մեզ է տրամադրել Փարիզի Նուբարյան գրադարանի տնօրեն պարոն Հարությունն Գևորգյանը, որին հայտնում ենք երախտագիտության մեր խորին զգացումը:

73 P. P i s a n i. Les affaires d'Armenie. Paris, 1895.

74 P[ere] F. C h a r m e t a n t. Martyrologe armenien.

ների միջև առկա զանազանության, անհավատների հանդեպ վերջիններիս անհանդուրժողականության համատեքստում: «Իսլամականության պատմությունը երկար նահատակություն է, որտեղ արյունոտ տառերով միմյանց են շաղկապվում այն բոլոր քրիստոնյա ժողովուրդների անունները, որոնք կքված են մահմեդական տիրապետության ներքո»[75],– գրում է նա:

Ի շարս օսմանյան լծի ներքո հեծող քրիստոնյաների, աբբա Պիզանին առանձնացրել է հայերին, որոնց և այլ ժողովուրդների ճակատագրերի միջև նա համեմատության եզրեր իսկ չի տեսնում: Համառոտակի վերլուծելով հայ ժողովրդի պատմական զարգացման յուրահատկությունները, մատնանշելով մասնավորապես վաղուց ի վեր Հայաստանի անկախության կորուստը, նա փորձել է վեր հանել այն պատճառները, որոնք XIX դ. վերջերին շարունակում էին խոչընդոտել հայերին ձեռք բերելու բաղձալի ազատագրումն օսմանյան լծից: Այս հաշվում ևս աբբա Պիզանին գերադասել է նախապատվությունը տալ կրոնական գործոնին. ըստ նրա, դեռևս V դ. հայերը խզել են կրոնական բոլոր առնչությունները կաթոլիկություն գավանող ժողովուրդների հետ և հենց «այդ կրոնական մեկուսացումն է մեծապես նպաստել քրիստոնեական տերությունների միջամտության հետաձգմանը»[76]:

Բացի դրանից, նա շեշտել է հայերի առջև ծառացած ևս մեկ խոչընդոտ՝ Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող մահմեդական տարբեր ժողովուրդների և առաջին հերթին անհնազանդ քրդական ցեղերի հետ նրանց անմիջական հարևանության հանգամանքը, որն աննախադեպ է օսմանյան լծից ազատագրված այլ երկրներում: «Սպասելով,– նշում է նա,– հայերը շարունակում էին ենթարկվել զազրելի բռնություններին՝ չնայած այն հստակ երաշխիքներին, որոնք արձանագրվել էին Բեռլինի պայմանագրում»[77]:

Ստեղծված իրավիճակում, ըստ աբբա Պիզանիի, հայերին վիճակված էր ընտրել փակուղուց ելնելու միակ հնարավոր զենքի դիմելու միջոցը: Ուստի, տարբեր երկրներում նրանք հարկադրված են եղել կոմիտեներ հիմնադրելու և ձեռնամուխ լինելու քաղաքական աշխատանքի, սակայն, ըստ նրա, «որքան նրանց կուսակցության ղեկավարները ձեռներեց էին, նույնքան ազգի հիմնական զանգվածը նվազ հակում ուներ զենք կրելու»: Միակ նշանակալից ըմբոստությունը, որն արժանացել է նրա ուշադրությանը, 1894 թ. Սասունում բռնկված ապստամբությունն է, որի ճնշումը հանգեցրել է «սպանդի»[78]:

1895 թ. հայերի կողմից բողոքի ցույցի կազմակերպումը Կոստանդնուպոլսում աբբա Պիզանին համարում է «վտանգավոր ուղու» ընտրություն, որն այդուհանդերձ որդեգրվել է, չնայած այն բանին, որ «հոգևորականությունը, որի շարքերում կային շատ մեծ հայրենասերներ, բայց նաև

75 L'abbé P. P i s a n i. Les massacres d'Armenie, p. 5.
76 Նույն տեղում, էջ 9:
77 Նույն տեղում, էջ 12:
78 Նույն տեղում, էջ 13:

զգույշ ու փորձառու անձիք, նման նախագծին վերաբերվում էր անհանգստությամբ»[79]:

Հենվելով հայր Շարմետանի կողմից վերը նշված փաստաթղթերի ժողովածուում ամփոփված վավերագրերի վրա՝ աբբա Պիղանին հիշատակել է տարբեր բնակավայրերում տեղի ունեցած հայկական ջարդերը, առանձնահատուկ ուշադրություն դարձրել տարբեր վիլայեթներում զանգվածային կրոնափոխության իրողության վրա, ընդգծել եղեռնի իրականացման հարցում մահմեդական մոլեռանդ բնակչության, ոստիկանության և կանոնավոր բանակի զինվորների համագործակցությունը:

Իրադարձությունների նկատմամբ տեղական իշխանությունների որդեգրած վարքագծի վերլուծության հարցում նա դրսևորել է անկողմնակալ մոտեցում, հավաստել տարբեր բնակավայրերում թուրք պաշտոնյաների կողմից հայերի հանդեպ հանդես բերված բարյացակամ վերաբերմունքը: Ելնելով համանման փաստերից՝ աբբա Պիղանին եզրակացրել է. «Նրանք կարող էին այդուհանդերձ խոչընդոտել չարիքին, որովհետև ամենուր, որտեղ նման ցանկություն են դրսևորել՝ դրան հասել են»[80]: Ընդհանուր առմամբ, նրա դիրքորոշումը հանդում է հետևյալին. «Կարելի է կարծել, որ մի գաղտնագրված բանագնաց կտրել անցել է երկիրը՝ հաղորդելով այս հրամանը (կոտորածներին վերաբերող – Վ.Պ.), դրին յուրաքանչյուրն իր պարտքն է համարում ենթարկվել: Նշմարելի է նաև, որ կոտորածները հաճախ սկսվել են ուրբաթ օրը, այնժամ, երբ մահմեդականները՝ սրբազան պատերազմի մի քանի մոլեգին կոչերով ոգեշնչված դուրս էին գալիս մզկիթից»[81]: Ակնհայտ է, որ աբբա Պիղանին ընդգծում է կոտորածների կանխամտածված և նախապատրաստված բնույթը: Այնուամենայնիվ, պատասխանատուներին մերկացնելու հարցում նրա մեկնաբանությունները խիստ մակերեսային են: Արձանագրելով, որ դրանից մեկ տարի առաջ ոչ մեկը չէր կարող «ենթադրել քրիստոնյա ազգության նկատմամբ նման նողկալի դավադրության» մասին, նա՝ շարունակում է. «Ասել են, դրել են, որ հայերի բնաջնջումը, որը Հայկական հարցի լուծման ամենից արմատական միջոցն է, նախապատրաստել է սուլթանի կառավարությունը: Ես վարանում եմ ընդունել այդ կարծիքը: ... Ըստ իս, բնաջնջման հրամանը կայսերական ապարանքից չի արձակվել. դա հավանաբար տրվել է ավելի բարձրից: Սուլթանից վեր գտնվում են կրոնական եղբայրությունները, որոնք իսլամում ամենազոր են»[82]:

Այսպես, իրադարձությունների քննարկումը պարփակելով սոսկ կրոնական առճակատմանն առնչվող շրջանակում, նա, ցավոք, չնայած այդ ժամանակաշրջանում հրապարակի վրա արդեն եղած մատչելի փաստաթղթերի ընձեռած հնարավորությանը, անկարող է գտնվել այդուհանդերձ հաղթահարելու իր իսկ հայացքների սահմանափակվածությունը և ցուցաբերելու համակողմանի մոտեցում: Հայտարարում՝ նա ոչ միայն սուլթանին ամբողջությամբ զերծ է պահել կոտորածների հարցում նվազագույն իսկ

79 Նույն տեղում էջ 13–14:
80 Նույն տեղում, էջ 20:
81 Նույն տեղում, էջ 17:
82 Նույն տեղում, էջ 16:

պատասխանատվությունից, այլև անհիմն ձևով առարկել իր նախորդների կողմից առաջադրված հարցի մեկնաբանման սպառիչ տարբերակին:

Ի տարբերություն աբբա Պիգանիի, Հայկական հարցում ֆրանսիացի կրոնական գործիչների դրոշակակիր հայր Շարմետանը (1844-1921) Համիդյան կոտորածները մեկնաբանել է շատ ավելի լայն կտրվածքով: Հայ դատի բոցաշունչ պաշտպան, առաքելական միսիոներ, Արևելքի բարեգործական ընկերության տնօրեն, Վատիկանի հանձնարարությամբ եվրոպական տարբեր երկրներում բազմիցս դիվանագիտական առաքելություններ իրականացրած հայր Ֆելիքս Շարմետանը 90-ական թվականներին լայնածավալ աշխատանք է իրականացրել ոչ միայն հայերի եղեռնի հավաստի պատկերը ֆրանսիական հասարակայնությանը ներկայացնելու[83], այլև հանդանակությունների միջոցով արևմտահայերին նյութապես օժանդակելու ասպարեզում:

Առաջին անգամ հայր Շարմետանը Համիդյան ջարդերը նշավակել է 1896 թ. մայիսի 18-ին, Փարիզի Լյուքսեմբուրգյան ակումբում ունեցած հրապարակային ելույթում: Ցեղասպանության մեկնաբանման հարցում նա գրավել է միանգամայն հստակ դիրքորոշում՝ այն դիտելով իբրև բացառապես կրոնական հողի վրա խարսխված երևույթ: «Մի ամբողջ ժողովուրդ իր հավատի պատճառով,– գրում է նա,– մահմեդական մոլեռանդության կողմից դատապարտված է բնաջնջման և մահվան»[84]: Ինչ վերաբերում է այն «սարսափների մանրամասներին», որոնք վերապրել են մաղապուրծ եղածները, ապա դրանք, ըստ նրա, դրծադրվել են, որպեսզի «նրանց հարկադրեն ուրանալու իրենց հավատը»[85]: Սրտի անհուն կսկիծով է հայր Շարմետանն արձագանքում յաթաղանից փրկված հայերի թշվառ վիճակին. «Ի՞նչ արհավիրք, ի՞նչ թշվառություն կարող է համեմատվել հաղարավոր քրիստոնյաների արհավիրքների և թշվառությունների հետ, որոնցից խլել են ամեն ինչ, որոնց տները կողոպտել են ու հրկիզել և որոնք մնում են անապաստան, առանց հագուստի, առանց պարենային պաշարների, որոնք դատապարտված են կամ ուրացության, կամ սովամահության եթե մենք նրանց չուտափույթ օգնության չհասնենք»[86]:

Հայր Շարմետանի հայացքների համակարգում հարկ է առանձնացնել ուշադրության արժանի ևս մեկ առանցքային՝ եվրոպական քրիստոնեական պետությունների, այդ թվում Ֆրանսիայի ղեկավար շրջանների քաղաքականության խարազանման հանգամանքը, որոնց կողմից և ոչ մի «պաշտոնական խոսք չի ասվել՝ ի նպաստ զոհերի»: «Ես,– շարունակում է նա,– դրա համար զգում եմ եռակի ամոթ՝ իբրև մարդ, իբրև ֆրանսիացի և իբրև քահանա»: Հայր Շարմետանն անողոք է մասնավորապես իր լռությամբ իրականությունը հառարակական կարծիքից թաքցնող ֆրանսիական մամուլի նկատմամբ. «Մեղավորը մասնավորապես մամուլն է: Մենք ցա-

83 Տե՛ս P [e r e] F. C h a r m e t a n t. Martyrologe armenien; Նույնի՝ L'Armenie agonissante; Նույնի՝ Le Livre jaune et la question d'Orient.

84 Conferences sur les massacres d'Armenie.– La verité ..., p. 91; R [r e v e r e n d] P [è r e] F. C h a r m e t a n t, Livre d'or des martyrs de la Charite. Hommage aux victimes de la catastrophe du 4 mai 1897. Paris, 1897, p. VIII, IX.

85 Conferences sur les massacres d'Armenie, p. 91–92.

86 Նույն տեղում, էջ 93:

վով տեսանք, հազվադեպ բացառություններից զատ, թե ինչպես է անգամ ամենաքաջարի և ամենամարտնչող լրագրերի մեծամասնությունը մերժում մեր հաղորդումներն ու լռություն պահպանում»[87]: Փոխարենը, նա գովեստի խոսքեր է հղում եկեղեցու հասցեին, որը չի զլացել օգնության ձեռք մեկնելու զոհերին և իրեն քաջալերել է նրանց համար հանգանակությունների կազմակերպման միջոցով գումարներ հայթայթելու գործում[88], շեշտում է բազմաթիվ եպիսկոպոսների ցուցաբերած աջակցությունը[89]:

Հարկ է չանտեսել, որ շնորհիվ Սապահ-Գյուլյանի ջանքերի, 1896 թ. Փարիզում կազմակերպվել է նաև «հոչակավոր սալոնների տեր՝ նշանավոր բոլոր տիկիններից մի բացառիկ ժողով»[90], որտեղ Համիդյան ջարդերին նվիրված ելույթով հանդես է եկել նաև տիկին Հուդրի-Մենոսը: Վերջինս հայերի ցեղասպանության իրականացումը պայմանավորել է Աբդուլ Համիդի կողմից կենսագործվող և «Հայկական հարցից ձերբազատվելու» նպատակ հետապնդող ծրագրված քաղաքականությամբ: Խոսելով Տրապիզոնի կոտորածների մասին, օրինակ, նա մասնավորապես նշել է, որ դրանք սկսվել են «Կոստանդնուպոլսից տեղ հասած գաղտնի հրամանների հիման վրա», հավաստի է համարել «իշխանությունների մեղսակցությունը» նահանգներում ընթացող հայերի կոտորածներին, չի անտեսել կրոնափոխությանն առնչվող փաստերը[91]:

Ինչ վերաբերում է Սասունի իրադարձություններին, հեղինակը հայերի ըմբոստությունը մեկնաբանել է այն փաստով, համաձայն որի վերջիններս, չհասնելով իշխանություններից ակնկալվող արդարության, «հարձակվել են գողերի վրա և նրանցից ետ կորզել իրենց ունեցվածքը», իսկ կառավարությունը, խախտված կարգը վերականգնելու «պատրվակի ներքո», անմիջապես այնտեղ զորքեր է ուղարկել: Թուրք ջարդարարներին նա բնութագրել է իբրև «հրեշների», իսկ 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ցույցին հաջորդած կոտորածն անվանել «իսկական սպանդ»: Հուդրի-Մենոսը, հայկական կոտորածները դիտելով իբրև «Նոր Սուրբ Բարթուղիմեոսյան գիշեր», համոզմունք է հայտնել, որ «անհնար է մատնանշել այն բոլոր քաղաքների անունները, որտեղ մահմեդական մոլեռանդությունն ահաբեկչություն, մահ և հուսալքություն է սփռել»[92]: Հայերի ցեղասպանության հարցում նա խստագույնս դատա-

87 Նույն տեղում, էջ 92:

88 Այս հարցի կապակցությամբ հայր Շարմետանը մեկ այլ առիթով հավաստել է. «Կոտորածների առաջին իսկ պահից մենք մեր գրասենյակներում կազմակերպել ենք հասարակական հանգանակություն, որի շնորհիվ հազարավոր հայեր արդեն փրկվել են աներկբա մահից կամ ուրացությունից» (R [é v é r e n d] P [è r e] F. C h a r m e t a n t. Livre d'or ..., p. IX): Նշենք նաև, որ թե՛ 1897 մայիսի 4-ին Փարիզի Գթության շուկայում բռնկված հրդեհի զոհերի հիշատակին նվիրված՝ խնդրո առարկա գիրքը, թե՛ 1896 թ. հրատարակած «Հայկական նահատակություն» խորագիրը կրող փաստաթղթերի ժողովածուն, նա վաճառքի է հանել հայկական կոտորածների զոհերի օգտին կազմակերպված հանգանակության համար:

89 Conferences sur les massacres d'Armenie, p. 92-93: Հայր Շարմետանի հայանպաստ գործունեության մասին մանրամասն տե՛ս Վ. Պ ո ղ ո ս յ ա ն. Համիդյան կոտորածները և հայր Շարմետանը.– «Էջմիածին», 2002, N Դ, էջ 72–80:

90 Ս. Ս ա պ ա հ - Գ յ ո ւ լ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 156:

91 M[adame] H u d r y - M e n o s. Les massacres en Armenie. Paris, 1896, p. 3, 6, 10.

92 Նույն տեղում, էջ 4, 11:

պարտել է եվրոպական տերություններին, որոնք «թույլատրել են իրականացնել այն ամենասարսափազդու կոտորածները, որոնց վկան է դարձել քաղաքակիրթ կոչվող դարաշրջանը»: Այս հարցում այս կամ այն չափով մեղավոր համարելով բոլոր տերություններին՝ նա հավաստել է, որ օգտվելով վերջիններիս անգործությունից, սուլթանը նրանց փաստորեն ծաղր ու ծանակի է ենթարկել: Հուգրի-Մենոսը քննադատել է մասնավորապես ֆրանսիական կառավարությանը, որն ի տարբերություն անգլիականի, ձեռնպահ էր մնում արխիվային փաստաթղթերի ժողովածուի՝ «Դեղին գրքի» հրապարակումից[93]:

Ամփոփենք. քննարկված ելույթները մեծապես նպաստել են Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի եղեռնի հավաստի պատկերը եվրոպական հասարակայնությանը ներկայացնելու գործին, որը և կանխորոշում է նրանց պատմական նշանակությունը: Եթե մինչև 1896թ., գլխավորապես ֆրանսիական մամուլի խորհրդավոր լռության պատճառով, Ֆրանսիայում հայկական ջարդերի մասին գոյություն ունեին խիստ աղոտ պատկերացումներ, ապա 90-ական թվականների երկրորդ կեսին՝ շնորհիվ ֆրանսիացի մտավորականների հայանպաստ գործունեության և այդ թվում հրապարակային ելույթների՝ կոտորածների անսքող պատկերը բացահայտվել է իր ողջ ողբերգական բազմերանգությամբ:

ГАМИДОВСКИЕ ПОГРОМЫ В ПУБЛИЧНЫХ ВЫСТУПЛЕНИЯХ ФРАНЦУЗСКИХ СОВРЕМЕННИКОВ

ВАРУЖАН ПОГОСЯН

Р е з ю м е

Армянские погромы, учиненные Абдулом Гамидом II в 90-х годах XIX столетия, вызвали бурную реакцию протеста во Франции. Во второй половине 90-х годов представителями французской интеллигенции были изданы сборники документов, книги и статьи, разоблачавшие политику истребления армянского народа. В данной статье критически разобраны публичные лекции, прочитанные во Франции в 1896-1899 гг. Кара де Во, А. Леруа-Болио, членом Французской Академии наук А. Вандалем, П. Кулбо, апостольским миссионером Ф. Шарметаном и другими, которые, несмотря на подчас существенные расхождения в интерпретации обсуждаемых ключевых вопросов, тем не менее подвергли резкой критике политику уничтожения армян. Часть из них (Кара де Во, Леруа-Болио, отец Шарметан, аббат Пизани) рассматривали геноцид армян как событие, имевшее место исключительно на религиозной почве. Однако Вандаль и Кулбо обусловливали армянские погромы проводимой османским правительством государственной политикой. Большинство выступило также против

93 *Նույն տեղում, էջ 4:*

индифферентности Франции и других ведущих европейских держав, не проявлявших желания обуздать турецких палачей.

THE ARMENIAN MASSACRES UNDER ABDUL HAMID II IN THE PUBLIC SPEECHES OF THE FRENCH CONTEMPORARIES

VARUZHAN POGHOSYAN

S u m m a r y

The Armenian massacres organized by Abdul Hamid II at the end of the 19th century, had risen a violent reaction of protest in France. At the second half of the 90s several documents, as well as books and articles had been published in France on the Armenian Genocide. In the present article the author analyses the public speeches of the French scientists (A. Vandal, A. Leroy-Beaulieu), public and religious men (Carra de Vaux, F. Charmetant and others), who had violently criticized the policy of extermination of the Armenian people, adopted by the Turkish sultan. Some of them (Carra de Vaux, F. Charmetant, P. Pisani and others) had interpreted the Armenian Genocide as an event, which took place only on the religious ground. But some others (A. Vandal, P. Coulbaut) had stipulated the Genocide by the state policy, followed by the Ottoman government. The majority of them had also criticized the indifference of the European countries, and mostly France, towards the fate of the Armenians.